

5.3. 2011 թվականի հոկտեմբեր ամսվա հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հոկտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-3 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 1-3 աստիճանով և երրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր 2-4 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +19 +21°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +16 +19°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +14 +16°C, լեռնային շրջաններում՝ +12 +15°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հոկտեմբերի 11-12-ին: Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում գրանցվել է +27 +30°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +25 +30°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +24 +28°C, լեռնային շրջաններում՝ +21 +26°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է 0 +3°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +2 +4°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +3 +7°C, Սյունիքի հովիտներում, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ +6 +8°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հոկտեմբերի 28-31-ին: Լեռնային շրջաններում և Սյունիքի նախալեռներում գրանցվել է -2 -7°C, ՀՀ Լոռու մարզում՝ -4 +1°C, Սյունիքի հովիտներում՝ -1 +2°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ +1 +4°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +2 +5°C:

Ամսական տեղումների քանակը տարածաշրջանների զգալի մասում եղել է նորմային մոտ՝ դրական և բացասական շեղումներով: ՀՀ Շիրակի մարզում այն կազմել է նորմայի 63-81%-ը, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 81-130%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 70-87%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 108-154% (ք.Ապարանում՝ 52%), ՀՀ Վայոց ձորի մարզում՝ 100-115%, ՀՀ Տավուշի մարզում՝ 71-110%, ՀՀ Լոռու մարզում՝ 76-114%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 104-160%, Արարատյան դաշտավայրում՝ 73-97% (ք.Արարատում և ք.Արտաշատում (ՀՀ Արարատի մարզ)՝ համապատասխանաբար 166% և 173%):

Հոկտեմբերի 1-ին, 17-20-ին և 26-30-ին ՀՀ Լոռու մարզի առանձին շրջաններում, Արագածոտնի նախալեռներում, լեռնային և արևելյան առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 20-500 մ տեսանելիությամբ: Հոկտեմբերի 13-ին, 17-ին և 19-20-ին հիմնականում լեռնային շրջաններում և Արարատյան դաշտավայրում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 12-18 մ/վրկ, պոռթկումները՝ 20-25 մ/վրկ:

Հոկտեմբերի 1-ին, 13-ին, 19-ին և 26-ին տարածաշրջանների զգալի մասում, 3-ին, 14-18-ին, 20-ին և 27-30-ին առանձին շրջաններում դիտվել են տեղումներ, լեռնային շրջաններում՝ ձյուն: Հոկտեմբերի 1-ին Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ), 27-ին Սյունիքի լեռնային և նախալեռնային գոտիներում ձևավորվել է ձյան ծածկ: Ձյան ծածկույթի

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

բարձրությունը հոկտեմբերի 31-ի դրությամբ Արագած բարձր լեռնային կայանում կազմել է 31 սմ, ք.Քաջարանում և Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ համապատասխանաբար 23 սմ և 13 սմ, ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 6 սմ, Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 5 սմ, Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 4 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 2 սմ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 100-150%-ը:

Սևանա լճի մակարդակը հոկտեմբեր ամսվա ընթացքում իջել է 3 սմ-ով և հոկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1900.22 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 23 սմ-ով: